№ 8 ՀԻՆԳՇԱԲԹԻ 15 ՅՈՒՆՎԱՐԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 15 ՅՈՒՆՎԱՐԻ № 8

Այսօր, ՅՈՒՆՎԱՐԻ 15-ին,

ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՃԵՐՄԱԿԵՂԷՆ ՀԱՒԱՔԵԼՈՒ ՕՐՆ Է

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ

(44-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	5 րուբ.	4 րուբ.	3 րուբ.	2 րուբ.

Յունվարի 1-ից մինչև փետրվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

«Մշակը» ունի սեփական թղթակիցներ արևելեան և կովկասեան ռազմաճակատների վրա—Վարշավա և մօտակայ շրջաններում, Կարս, Սարիղամիշ, Բայազիդ և այլն։

ՊՐԵՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1915 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1915 թ.) միանուագ կամ մաս-մաս վճարած կլինեն 10 րուբլի բաժանորդագինը, կը ստանան 1915 թ. ընթացքում ՁՐԻԱԲԱՐ հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը.

1) „Տանջվածը", մեծ վէպ ՇԱՀՐԻԱՐԻ, հայկական յեղափոխական կեանքից։
2) „Հայկական հարցը", լուսաբանված դոկումէնտներով, մի ստուար հատոր, պատկերներով։

Ծանօթ.—Արտասահմանեան բաժանորդները պրէմիաները ստանալու համար պիտի ուղարկեն ճանապարհածախսը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՍՈՒԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Պատերազմից Վնասվածներին Օգնող Հայկական Կենտրոնական Կոմիտէն և Կ. Հ. Բ. Ընկ. Խորհուրդը

յօգուտ գաղթականների յունվարի 29-ին կազմակերպում են „Գթութեան եւ ողորմածութեան օր":
Նրանք, որոնք ցանկանում են մասնակցել այս գործում, թող բարեհաճեն գրվել 1) «Մի բաժակ թէյ» Головинскій пр. № 25, 2) «Մի բաժակ թէյ» Гановская ул. № 3 և Կ. Հ. Բ. Ընկ. գրասենեակը Абасъ-Абадская пл. № 7. Կարելի է գրվել մինչև ամսիս 20-ը, որից յետոյ ընդհատվում է, որպէսզի ստացվի ոստիկանատնից պատշաճաւոր թոյլտուութիւնը։

տպ. (ա. օ.) 23. 2—2

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
ԵՂԲ. ԲՈՒԴԱՂԵԱՆՑՆԵՐԸ

յայտնում են ի գիտութիւն իրանց հետ գործ ունեցողների, որ, քաղաքական վերջին անցքերի պատճառով, ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ քաղաքներում իրանց ունեցած

Առևտրական բոլոր բաժանմունքները

ժամանակաւորապէս փակվել և փոխադրվել են այստեղ,

Հասցէն՝ «Тифлисъ, Лермонтовская 15». տպ. 22. 2—2

Натуральный
МУРАВЬИНЫЙ СПИРТЪ
Съ прибавленіемъ Муравьинаго масла
ОТЪ ПРОСТУДЫ и РЕВМАТИЗМА
Старинное испытанное народное средство, радикально излѣчивающее даже самый застарѣлый ревматизмъ.
Почтовый адресъ: гор. Калуга, Дмитрію Дмитріевичу Карпову, имѣніе Тибекино.

տպ. 18. 10—3

ЗАМѢЧАТЕЛЬНЫЕ
БѢЛЫЕ ГРИБКИ и ОПЕПОЧКИ.
Отварены въ натуральномъ уксусѣ, на чисто-рафинадномъ сахарѣ.
Передъ отваркой всѣ грибы промываются въ растворѣ лимонной соли.
НА ВЫСТАВКАХЪ ВЫСШІЯ НАГРАДЫ
—◆ Золотыя медали. ◆—
Почтовый адресъ: гор. Калуга, Дмитрію Дмитріевичу Карпову, имѣніе Тибекино.

տպ. 19. 10—3

ԽԱԹԱԲԱԼԻՍՏՆԵՐ բոլոր երկրների, միացէք և շտապեցէք ու 1915 թ.
Երգիծաբանական շաբաթաթերթ

Xs. ԽԱԹԱԲԱԼԱՅԻՆ Xs.

Բաժանորդագրվեցէ՛ք

Տարեկան գինն է 5 ր., կէս տարվանը 3 ր.: Հասցէն՝ Тифлисъ, Редакція «ХАТАБАЛА».
Լոյս տեսան № № 1, 2 և 3 և ուղարկվեցին բաժանորդներին և գաւառական գործակալներին։

տպ. (Հ. Կ.) 17. 3—2

Պարսկահայ Փախստականներին Օգնող Յանձնաժողովը

յայտարարում է ի գիտութիւն բոլոր պարսկահայ փախստականների, որ Յանձնաժողովի գրասենեակը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10—2։ Այն բոլոր անձնաւորութիւնները, որոնք պէտք ունեն Յանձնաժողովի բարոյական և նիւթական աջակցութեան, կարող են դիմել գրասենեակը։

Հասցէն՝ Сергіевская 20, домъ Лисиціана («Հասկերի» խմբագրութիւն)։

տպ. (Հ.) 16. 2—2

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆ

Յօգուտ **ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ** հայ փախստականների համար,
Հինգշաբթի, յունվարի 29-ին

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ՕՐԸ հատը 1 ր. փոխարէն 20 կոպէկով վաճառվելու է 10.000 հատ

Ս. Ղեւոնդ երէցը օրհնում է հայոց սպարապետ Վարդան Մամիկոնեանի դրօշակը:

Թէ Թիֆլիսում և թէ գաւառներում ամեն տեղ վաճառվելու է Վարդանանց տօնի օրը միայն հատը 20 կոպէկով։

Գաւառներից պահանջները պէտք է անել փօստով։ Ճանապարհածախսը պատուէրատուողը չը պէտք է վճարի, եթէ պահանջը 25 օրինակից պակաս չէ։

Դիմել՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ, Головинскій пр. 41.

(ու. Հ.) տպ. 13. 0—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, հինգշաբթի, յունվարի 15-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ

ՀԷՔԻԱԹ

Դրամատ. էտիւդ արևելեան կեանքից 1 գործ. հեղ. Մ. Մանուէլեանի.
Յետոյ կը ներկայացվի

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՆՐԱՆՔ ԹՈՂԵՑԻՆ ԾԽԵԼԸ

Կօմ. 2 գործ. Տրախտենբերգի, թարգմ. Գր. Աւետեանի։
Սկիզբը երեկ. ժամը 8-ին։
Տոմսակները 1 րուբլուց մինչև 30 կոպ.։
Ռեժիսսեօր՝ ՍԻՒՐՄԵԱՆ

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կ.։

տպ. 26. 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

Այսօր, հինգշաբթի,
յունվարի 15-ին
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Կը ներկայացնէ
Առաջին անգամ Ժողովրդական Տան բեմի վրա

ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍԻ

Դրամա 4 գործ., փոխադր. Ա. Սարգարեան-Արեշատեանի։

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. Զաբէլ, օր. Վանեցեան, պ. պ. Ազաբաբեան, ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ, Գուրեան, Գուրգէն, Եանիկեան, Եաղուբեան, Երամեան, Էլիզբարեան, Մարութեան, Յարութիւնեան II, Սերժ, Ռուսեան, և ուրիշները։

Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները 4—50 կ.։
Ռեժիսսեօր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Ա. Նազարէթեան և Ց. Մալխասեան

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԻ 2°/₀-Ը ՅԱՏԿԱՑՎԱԾ Է ՊԱՀԵՍՏԻ ԶԻՆՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԻՆ։

տպ. 27. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բոտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Գ. Շահպարոնեանց

(Հ. Կ.) տպ. 970. 100—21

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատօր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 7—9. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ): Բժշկի բնակարանը Սեմեօնօվսկայա, № 16.

(Հ. ու. Կ.) 1018. 100—20

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նարաբեան

(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան)։

Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12¹/₂—2.
(եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սօլօլակ, Բոտիշչևսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.

Ն.Հ.Կ.) տպ. 784. 100—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ

վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմօնտօվսկայա փողոց № 1. մուտքը Նրբափողոցից։

տպ. (Հ.Կ.) 801. 0—78

ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ

Մի գեղեցիկ և խորհրդաւոր զուգադիպութեամբ ճիշդ այն օրը, երբ Թիֆլիսում, 1914 թ. դեկտ. 28-ին, Նորակազմ Հայ Նպաստամատոյց Ընկերութիւնը իր անդրանիկ ընդհանուր ժողովում որոշումն էր կայացնում միջնորդութիւն յարուցանել Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջ՝ գումարելու Էջմիածնում իր պատուաւոր նախագահութեամբ խորհրդակցութիւն փախստական-գաղթականներին օգնող բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչներից՝ մշակելու համար գործունէութեան և աշխատանքի մի ընդհանուր ծրագիր, ճիշդ այդ օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը արձակում էր մի կոնդակ նոյն մտքով յանուն Էջմիածնի կոմիտէի, որ, ինչպէս երեւում է կոնդակից, սահմանված է լինել գեր-կենտրոնական կոմիտէ, ուր պէտք է կենտրոնանան բոլոր տեղեկութիւնները, հաշիւները փախստականների մասին և առ որն ուղղվում են վերջերս բոլոր նուիրաբերութիւնները զանազան կողմերից։

Այդ հանգամանքը ցոյց է տալիս, որ Էջմիածնում խորհրդակցական համագումար կազմելու միտքը հասունացած և կարևոր է, հետևաբար և Նպաստամատոյց Ընկերութեան առաջին քայլը ողջունելի, իսկ Վեհափառ Հայրապետի նախաձեռնութեան անդրանկութիւնը ըստ ամենայնի գովելի։

Մենք ասացինք, որ Էջմիածնի կոմիտէը սահմանված է լինել գեր-կենտրոնական կոմիտէ, որովհետև ներկայումս կենտրոնական կոմիտէներ կան Երևանում, Հին-Նախիջևանում կամ Ջուլֆայում, Ալէքսանդրօպօլում, Կարսում և Իգդիրում. Ինչ վերաբերում է Թիֆլիսի կենտրոնական կոմիտէին, որ կազմված է Հայոց Բարեգ. Ընկերութեան կից և որ սկզբում առանձնեց կենտրոն դառնալու ֆունկցիան, այժմ նա ևս պէտք է նկատվի իբրև շրջանային կամ Թիֆլիսի կենտրոնական կոմիտէ, որովհետև գործերի բնական բերմամբ Էջմիածնի կոմիտէն է դառնում գեր-կենտրոնական, Կաթողիկոսի նոր կոնդակի համաձայն։

Սակայն հէնց այդ պատճառով և Էջմիածնի գեր-կենտրոնական կոմիտէի կազմը, որ այժմ բաղկացած է բացառապէս Էջմիածնի միաբանութիւնից՝ վստահութեան արժանի անձերից, պէտք է լրացվի ժողովրդական տարրի ներկայացուցիչներով։ Եւ այդ ներկայացուցիչներին, իբրև կազմի լրացումն կամ ուժեղացումն կարող է տալ խորհրդակցական համագումարը, որի շուտափոյթ գումարման համար Նպաստամատոյց Ընկերութեան նոր նախագահը, ինչպէս տեսնվում է «Մշակի» այսօրվայ համարից, հեռագրով միջնորդութիւն է յարուցել Վեհ. Կաթողիկոսի առաջ։

Այդ խորհրդակցական համագումարը կորոշէ և կը կատարէ աշխատանքի բաժանումն փախստական գաղթականներին օգնող բոլոր կազմակերպութիւնների մէջ։

Գալով Նպաստամատոյց Ընկերութեան, որ իբրև միակ հայ ընկերութիւնը, գործող միայուն և հաստատված կանոնադրութեամբ, որի նպատակը բացառապէս ժողովրդական աղէտների ժամանակ հայ ժողովրդին օգնութիւն հասցնելն է, որքան մենք գիտենք, տրամադիր է իր օգնութիւնը դնել բացխնայ հողի վրա և վերցնել իր վրա մի կարևոր աշխատանք՝ պատրաստելու և մատակարարելու փախստական գիւղացիների համար երկրագործական օգնութիւն՝ լծկան տաւար, սերմացու, որպէսզի փախստականները, վերադառնալով իրանց տեղերը, հնարաւորութիւն ունենան անմիջապէս դիմելու հողագործական աշխատանքներին։

Սա գործ է կարևոր, գործ շինարար, գործ մշակութային և անպայման արժանի ամեն տեսակ խրախուսանքի, բարոյական և նիւթական աջակցութեան։

Ուստի և մենք գտնում ենք, որ հայ նուիրատուները ամեն կերպ աջակցութիւն պէտք է ցոյց տան Նպաստամատոյց Ընկերութեանը, իբրև միայուն և որոշ օրինական կանոնադրութեամբ գործող մարմնի՝ իրագործելու իր այդ շինարար և կազդուրիչ միսիան։

Այդ նպատակով անհրաժեշտ է, որ գաւառական մեր գործիչները աշխատեն անմիջապէս հիմնել և բանալ այն վայրերում, ուր կենտրոնացած են փախստականները, Նպաստամատոյց Ընկերութեան ճիւղեր, որ կանոնադրութեամբ նախատեսված է, կամ գոյութիւն ունեցող ժամանակաւոր կոմիտէները վերածեն ճիւղերի։

Ուրեմն մեր առաջ կայ մեծ, անհագին, հսկայական շինարար գործ, և այդ գործը կազմակերպելու, սիստեմի վերածելու համար անհրաժեշտ է խորհրդակցութիւն, որ, անշուշտ, մօտերս կը գումարվի Էջմիածնում։

Ի գործ ուրեմն աշխոյժով, եռանդով և ոգևորութեամբ։

Հ. Առաքելեան

ՕԳՆԵՑԷՔ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ

Այսօր ևս նշանակված է քաղաքում յօգուտ փախստականների ճերմակեղէնի, դրամի և այլ իրերի հաւաքումն։

Եթէ մի րոպէ պատկերացնենք մեզ թշուառ փախստականների վիճակը, երբ նրանք բռնված սարսափից, մոռանալով իրանց տանը ամեն բան, հազիւ մի քանի կտոր շոր վերցնելով այս ձմեռվայ օրերին փախել և ապաստանել են մեր երկիրը, մենք անշուշտ կը զգանք մեր մեծ բարոյական պարտականութիւնը՝ օգնելու մեր ունեցածից այդ թշուառներին։

Կովկասեան գլխաւոր կոմիտէտը, որ գործում է կոմսուհի Վորոնցովա-Դաշկովայի նախագահութեան ներքոյ, ընտրել է իր կազմից մի յանձնաժողով, որ գործում է փոխարքայի օգնականի ամուսին տ. Պետերսոնի ղեկավարութեամբ, որ և կազմակերպել է ճերմակեղէնի և այլ իրեր հաւաքելու գործը։

Քանի որ փախստականների մեծ մասը հայեր են, քանի որ հաւաքված իրերից և ճերմակեղէններից օգտվելու են գլխաւորապէս հայերը, ուստի ևս առաւել հայ հասարակութեան վրա բարոյական պարտք է ընկնում աջակցել յանձնաժողովին և տալ սրտաբուխ և առատ նուէրներ՝ իրերով, որ ամեն մի տան կը լինի անշուշտ աւելորդ։

Տուէք ուրեմն ձեր նուէրները փախստականների համար, յիշելով աւետարանական առածը, թէ՝ «ով կողորմի տնանկին, նա փոխ տուած կը լինի Աստուծուն»։

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

«ՄՇԱԿԻ» ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

Ալէքսանդրոպոլ 13 յունվարի

Այսօր Սարիղամիշից եկան, հանդիպեցին Ալէքսանդրոպոլ և ուղարկվեցին դէպի ներքին նահանգները 247 թիւրք գերված ասկերներ. Նրանք բոլորն էլ գերի են ընկած Զիվին-Էրզրում ճանապարհին։

Կարսի շրջանից նոյնպէս ուղղված են դէպի ներքին նահանգները 102 ասկեար և վիրաւոր՝ Օլթիի շրջանից բերված։

Ագիլեգ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

10 և 11 յունվարի

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Թիւրքիայից գրաւված յունական մանր նաւերը շարունակում են երթեւեկել Կ. Պոլսի և Տրապիզոնի միջև։ Այդպիսի նաւերից մէկը՝ «Քրիս» անունով, որ գնում էր յունական դրօշակի տակ, Կավակ մտնելիս, Տրապիզոնից վերադառնալու ժամանակ, ուր նա տարաւ վիրակապեր, կօնսէրվներ ու ռազմամթերք, մեծութեան պատճառով չը ճանաչվեց և ենթարկվեց ամրոցների թնդանօթների ռմբակոծութեան։ Նաւը անվնաս մնաց։ Նրա վրա գտնվում էին Կ. Պոլիս վերադարձող գերման օֆիցէրներ, որոնք վիրաւորվել էին ռուս-թիւրքական զօրաճակատի վերջին կռիւներում։

ՍՊԱՀԱՆ. — Մօլլաների կազմակերպված ագիտացիօն ժողովները յօգուտ թիւրքերի արգելվեցին գեներալ-նահանգապետներից. գերման-թիւրքական ագիտացիայի ջանքերը՝ առաջ բերելու ակտիվ քայլեր՝ առայժմ չէզոքացված են մեր հիւպատոսարանի վճռական միջոցներով։

ՆՈՐ-ԲՈՒԽԱՐԱ.—Եկաւ Թիւրքիայից բուխարական շէյխ-ուլ-իսլամը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թիւրքաց 11-րդ զօրաբանակի հրամանատար Գալիբ-փաշան գլխատվեց Հասան Իզզէթ-փաշայի հրամանով, Էնվէր-փաշայի դրդմամբ, Կարաուրգանի մօտ տեղի ունեցած կռւում սխալներ գործելու համար։ Մահապատիժը առաջ բերեց դժգոհութիւն թիւրք օֆիցէրների մէջ։

—

(Լրագիրներից)

◆ Բ. Դուռը դիմեց Բոլգարիային, խնդրելով թոյլ տալ արտահանել ուտելիք Թիւրքիայի համար։

◆ Լուրերի համաձայն, Վանի վիլայէթում հայերի կոտորած է։

◆ Տեղեկութիւններ են ստացվել, որ Ատրպատականում թիւրք զօրքերի վիճակը անելանելի է դարձել։

◆ Թիւրքիան դադարեցրել է ռոճիկներ տալը պաշտօնեաներին՝ բացի ծովային և զինուորական պաշտօնեաներից։

◆ Թիւրքիայում ֆինանսական տագնապ է. կառավարութիւնը մշակում է նոր հարկեր։ Ազգաբնակութիւնից ուտեստեղէնի աւելորդ մասը յարքունիս է գրաւվում։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ Սինոպի մօտ ջրասուզված «Գէօրգիօս» նաւի վրա, որ գնալիս է եղել Տրապիզոն, եղել է 16 աէրօպլան, այսինքն Թիւրքիայի ամբողջ օդային նաւատորմը։

◆ «Р. У.»-ին հեռագրում են, որ մեծաքանակ զօրքեր են դիմում դէպի Էրզրում, որի բնակիչները փախչում են Թիւրքիայի խորքը։

◆ Կ. Պոլիս են գնացել գերմանացի վարպետներ՝ «Գեբէնը» վերանորոգելու համար։

◆ «Համիդիէ» ռազմանաւը նոյնպէս ստացել է լուրջ վնասուածքներ։

◆ Կ. Պոլսում սկսվել է պանիկա. եւրօպացիք մեկնում են։

◆ Ստոյգ տեղեկութիւնների համաձայն, Էնվէր-փաշան, Սարիղամիշի մօտ թիւրք զօրքերի կրած ջարդից յետոյ, մեկնեց Տրապիզոն, որտեղից էլ փախաւ Կ. Պոլիս «Բրէսլաու»ով։ Այժմ նա Կ. Պոլսում համարեա տնից դուրս չէ գալիս. Նրա դրութիւնը անհաստատ է։

◆ «Р. В.»-ին հեռագրում են Լօնդօնից. «Եգիպտոսի դէմ կենտրոնացված թիւրքաց զօրքերի թիւը շատ մեծ է, թէև անգլիացիք ևս ունեն մեծաքանակ ուժեր։ Գերմանացիների պահանջով՝ շուտով կը սկսվեն ակտիվ գործողութիւններ թիւրքերի կողմից։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Թիւրքերը Ատրպատականում

Համաձայն պաշտօնական և մասնաւոր տեղեկութիւնների՝ թիւրք-քիւրդական այն զօրամասը, որ նոյեմբերի վերջերին մտել էր պարսկական սահման և Սուուջ-Բուլաղ Միանդաբի վրայով եկել էր Մարաղա և ապա դեկտ. 25-ին մտել Թաւրիզ, մինչև օրս, չը նայած որ անցել է մօտ 20 օր, չը կարողացաւ ձեռնարկել այնպիսի գործողութիւնների, որոնք ապացոյց ծառայէին թիւրքական զէնքի ունեցած ուժի մասին։ Այնպէս որ, եթէ ենթադրենք, թէ այդ արշաւի նպատակը Թաւրիզին տիրելն էր և ռուսական պրեստիժին ու առևտրին հարուած հասցնելը, դա յամենայն դէպս ռազմական որևէ արժէքից զուրկ է, քանի որ նոյնիսկ այն դէպքում, եթէ թիւրք զօրքի Թաւրիզում մնալը ոտի կանգնեցնէր ամբողջ Պարսկաստանի կենդանի ուժերին, այնուամենայնիւ պարսիկների ամբողջ քաջութիւնը իրանց գրպանների միջից բռունցք ցոյց տալուց այն կողմը անցնել չէ կարող և բաւական է միայն որ Ջուլֆա-Թաւրիզի ճանապարհում և կամ Ղարադաղի սահմանների վրա երևան ռուսական մի քանի բատալիոններ, որպէսզի պարսկական քաջագործ աւազակները փախուստի դիմեն, իսկ ժողովուրդը աղ ու հացով ընդառաջի մեր զօրքերին։

Ինչ վերաբերում է թիւրք մօտ 800 կանոնաւոր զօրքին և նրան միացած քիւրդական մի քանի հազար հրոսակախմբերին, նրանք ևս իրանց պատերազմական աւիւնով հազիւ թէ ետ մնան շահսեվան աւազակախմբերից և, տեսնելով մեր զօրքի առաջխաղացութիւնը, անշուշտ փորձ իսկ անեն որևէ լուրջ դիմադրութիւն ցոյց տալու։

Որ թիւրքական այդ զօրամասը մօտ օրերում մտածելու է իրան համար նահանջի ճանապարհ փնտռելու և այն էլ առանց որևէ ընդհարում ունենալու մեր զօրքի հետ, դա ամեն կասկածից դուրս է, քանի որ թիւրքերին եկած ճանապարհով ետ նահանջելու համար անհրաժեշտ է անել 350 վերստի չափ տարածութիւն, որ կարող է նա կատարել շատ-շատ 20—25 օրում. հակառակ դէպքում նրա ամեն մի օր յապաղումը պարսկական տերրիտօրիայում կարող է ճակատագրական լինել այդ զօրամասի համար, որովհետև նա թէ արևմուտքից և թէ հիւսիսից ընկած կը լինի մի այնպիսի ծուղակի մէջ, որպիսին բաղդ ընկաւ նրա միւս մեծաթիւ ընկերակցին Օլթի-Սարիղամիշի մօտ Բարդուզի լեռներում։

Այս վերջին բաղդին հազիւ թէ երկար սպասելու կարիք լինի. մեր քաջարի զօրքը Խօյ-Սալմաստի ուղղութեամբ օր-աւուր նեղում է թշնամուն և մի ողբերգութիւն պատրաստում թիւրքաց այդ զօրամասի համար։

Ա. Երկաթ

ՏԵԻՏՕՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

(Սեփական թղթակցից)

—

Արդահան, 30 դեկտեմբերի

Վերջին տասնհինգ օրվայ ընթացքում ի՛նչ սոսկալի տեսարանների ականատես եղաւ Արդահան քաղաքը, անհնար է նկարագրել։ Այդ սոսկալի շփոթութեան մէջ կատարվածները այնպիսի արագութեամբ սահեցին ու անցան, որ նրանց հետքը միայն երազի նման տպաւորութիւն ունեցաւ և գրեթէ անհետացաւ։ Այդ երազանքից յետոյ թմրած ու արբած մարդու նման չէ կարելի յիշել այն տխուր մանրամասնութիւնները, որոնք սոսկալի հարուածներ տուին տեղական ազգաբնակութեան ու անցան։

Արդէն դեկտ. 11-ին դուժկաններ եկան, թէ թիւրքական հինգ կորպուս մտաւ Օլթի, հասաւ Փէնէք և Մէրդէնէկի վրայով գալիս է Արդահան։ Լուրը տխուր էր և ահարեկիչ։ Երկու օր իրար վրա հասած լուրերը այնպիսի սարսափներ սփռեցին, որ տեղական քրիստոնեայ ազգաբնակութիւնը մեծ սրտադողով սկսեց փախչել։ Մանաւանդ որ վերջին մի ամսվայ ընթացքում շրջակայ թիւրք ժողովուրդը սոսկալի յոխորտանքով էր վերաբերվում, կարծես թէ արդէն իթթիհադականները տիրել էին նահանգին և թիւրքերը կամայականութեամբ պիտի խլացնէին ու իրանց մէջ բաժանէին քրիստոնեաների ինչքն ու զաւակները։

Մանաւանդ որ Արդահանում ապրող ժողովրդի մի մասը բնիկ արդուինցի ու արդանուշցի էր, որոնք արդէն լսած էին, թէ թիւրքերը Աջարայի լազերի առաջնորդութեամբ մտել էին նոյեմբ. 5-ին Արդուին և 7-ին՝ Արդանուշ։ Իսկ ամբողջ Արդահանին յայտնի էր, որ աջարացիները խմբախեցիների հետ Շաւշէթի հայկական Օկրօբագէտ, Սաթլել, Մամանելիս և Բարա գիւղերը կործանել, ինչքը յափշտակել և ժողովրդի մեծագոյն մասը ջարդել էին։

Երբ Մէրդէնէկից ու Եալաուզ-չամից թիւրքաց բազմաթիւ զօրքերը դիմեցին դէպի Արդահան, այլևս անհնար էր մնալ այդ քաղաքում։ Եւ մեր՝ տեղական զինուորական իշխանութիւնը մեծ հոգածութեամբ սայլեր տուաւ, մնացած ժողովրդին զինուորական արօզի հետ ճանապարհ դրեց դէպի Ախալքալաք, որոնց հետևում, պաշտպանում և թշնամուց պաշտպանվում էր նահանջող զօրքը։

Ամբողջ Արդահանը դատարկվեց, այնտեղ հայ ընտանիք չը մնաց։ Չը մնաց նոյնպէս տղամարդ, բացի մի քանիսից, որոնք հոգով կապված էին իրանց կարողութեանն ու կալուածքին։

Աջարսկի Բասիմ, Ջասիմ և Ջէլալ բէկերը իրանց տան մէջ տեղ էին տուել Արդահանում մնացած այդ անձերից Ալէքսանեան Պօղոսին և Ցրանեանց Կարապետին։ Նոյնպէս մի մի թուրք դրացու տուն ապաստանեցին թիֆլիսեցի Գրիգոր Աբրահամեանը, ախալցխացի Յակոբ Յովհաննիսեանը, արդուինցի Մկրտիչ Ավնաստրեանը, Շաւշէթի-Օքրօբագէտի գիւղից Նազարէթ Քեօսեանցը և ուրիշները։

Ռուսների փոքրաթիւ զօրամասը թէ պահպանում էր գաղթականներին ու արօզը և թէ շարունակ կռւում։ Այս միջոցին, երեքշաբթի, ամսիս 16-ին, երեկոյեան կողմերի ռմբակոծ և հրացանաձգութեան ժամանակ հրդեհ ընկաւ քաղաքի փողոցներում, ուր այրվեցին 20-ի չափ մեծամեծ երկյարկանի տներ, իրանց ներքին յարկի լէքլէք խանութներով։ Այս սոսկալի բոցն ու մանաւանդ փամփուշտների ու ռումբերի տրաքտրաքոցները ամբողջ օրը չը թողին թիւրքական զօրքին Արդահան մտնելու։

Կատաղում էին թիւրքերը, որ կարողացել էին հանել հարուստ քաղաքի դուռը և Ղուրանով իրանց բաժին արված աւարը թողնել բոցերին ճարակ։ Բայց դեկտ. 17-ի առաւօտեան՝ թալանի կրակով վառված խուժանը մտաւ քաղաք։ Դրան հետևեց թիւրք զօրքը՝ իր հետ քաշելով թալանչիների այն անվերջ կարաւանը, որը միացել էր թուրքական հորդաներին Օլթիից, Փէնէքից, Գեօլայից, Գեօլաշէնից, Արդահանի դաշտից, Կօչեվանից ու Ջղերից։

Այն, ինչ որ ազատվել էր հրդեհից, թալանեց թիւրք զօրքը, մանաւանդ խուժանը։ Բայց արդէն ուշացել էին. հարս, աղջիկ, կին, տղայ, զարդ ու զարդարանք կօզակները փրկել էին և հասցրել Ախալքալաք, կրակներն էլ լափել էր հրդեհը։ Ուստի զօրք ու զօրական ընկան տները խուզարկութեան։

Բասիմ, Ջասիմ և Ջէլալ բէկերը թիւրքական զօրքի հրամանատարին յանձնեցին Ալէքսանեան Պօղոսին, Ցրանեանց Կարապետին, որը նրանց կալանաւորեց, բանտարկեց և 20,000 ր. դրամ պահանջեց, որպէսզի ազատ թողնէ։ Անշուշտ հայերին սարսափեցնելու համար ոչ միայն գործում էր կռուփն ու մտրակը, այլ նոյնիսկ սուրն ու գնդակը։ Որպէսզի ահաբեկեն. երկու հարուստ հայերին, չորս հայերի դիակներ փռվեցին փողոցի մայթերի ու սառոյցների վրա։

Պօղոս Ալէքսանեանը բանտում տանջանքների ենթարկված, կրպակի մէջ ունեցած 35,000 ր. ապրանքը թիւրքերին յանձնելուց և այդքան էլ հրդեհի բոցերին մատնելուց յետոյ՝ կեանքն ազատելու համար պարտաւորված էր թիւրք փաշայի հրամանը կատարել և Ցրանեանցի հետ 20,000 րուբլին նրան վճարել։ Բայց փող չը կար, չունէր, որտեղից տար։ Երբ դահիճ զօրավարը տանջում ու պահանջում էր, Պօղոսը նրան ներկայացրեց 2000 ր. բանկային բաժնեթուղթ և ասաց.

—Էֆէնդիմ, մենք թալանված ենք, սրանից աւելի փող չունեմ։ Ուզում էք ինձ կախեցէք, սպանեցէք, ուզում էք թողէք։ Ահա ես, ահա տունս. քննեցէք, ոչինչ չունեմ, բացի չոր գլուխս, ես այժմ որտեղից գտնեմ 20,000 ր.։

— Թէ չը տաս, կը կախվես,—ասաց դաժան-դահիճ զօրավարը.—յաղթվողի պարտքն է՝ յաղթող զօրքին ռոճիկ մատակարարել, թօշակ տալ։ Գտիր, տուր։

— Շատ բարի, փաշա էֆէնդի, կը գտնեմ. բայց դու ինձ միջոց տուր, 4—5 օր ժամանակ տուր՝ գտնեմ։ Արդահանի և շրջակայքի բոլոր թուրք ու լազ բէկերն ու ադանները գտնեն, որ ես 50,000 ր. առնելիք ունեմ շրջակայ գիւղերում՝ թուրք, քիւրդ ու թարաքեամա ժողովրդի վրա։ Այդ բէկերն ու ադաները ինձ ճանաչում են, վստահում են։ Կանչեցէք նրանցից 5—10 մարդ, փոխառութիւն անեմ և ձեզ վճարեմ։

ՏՈՒԷՔ ՃԵՐՄԱԿԵՂԷՆ ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Հպարտ թիւրք զօրավարը իր խօսքով բռնվեց. ոչ միայն հինգ օր ժամանակ տուեց Ալէքսանեանին, այլ մարդ ուղարկեց շրջակայ թուրք գիւղերը, որ կալանաւորի ցոյց տուած մարդիկը հրաւիրեն Արդահան, որպէսզի փոխառութիւնը աջողվի և ինքը ստանայ պահանջած 20,000 րուբլին։

Բայց մեր կօզակներն աւելի շուտ հասան Արդահան, քան թէ գիւղերը ուղարկված թիւրք մէմուրները (գործակալ) վերադարձան։ Դեկտ. 19-ին այնպէս պաշարեցին Արդահանը, թիւրքական զօրքի գրաւման երրորդ օրը, որ թիւրք ասկեարը «Խաման-Մէդէդ Ալլահ» կանչելով փախաւ դէպի Գեօլա, Փէնէք։ Արդահանի շուրջը երեք ժամ չը կարողացան դիմադրել մեր քաջարի զօրքին, որը, առանց Արդահան մտնելու, նախ հալածեց ու քաղաքից 20 վերստ հեռու մղեց թշնամուն և ապա, ամսի 21-ի առաւօտեան, երաժշտութեան եղանակներով փառաւորապէս մտաւ քաղաք։

Մեր զօրականները ոչ միայն Ալէքսանեանին, Ցրանեանին ազատեցին թիւրքական կապանքներից, այլ և պատուհասեցին այն խուժանին, որը առաջնորդել ու օգնել էր թշնամուն։

Ագիլեգ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

13 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Արևելեան-Պրուսիայում և Պիլկալէնի շրջանում յունվ. 12-ին մեր զօրամասերը, յարձակման դիմելով, կռւով ետ մղեցին հակառակորդին Մալվիշկէն-Էսազինէն ռազմագծից։ Մի քանի տեղերում մերոնք գերմանացիներին հանում էին իրանց դիրքերից սուիններով։

Ստորին Վիսլայի աջ ափում յունվ. 12-ին շարունակվեցին մասնակի ընդհարումներ առաջապահ զօրամասերի միջև։

Վիշեգրօդի մօտ մեր թնդանօթային կրակից ոչնչացաւ թշնամու մի հակիչ զօրախումբ Վիսլայի ձախ ափում։

Վիսլայի ձախ ափում գերմանացիք նորից մի քանի անգամ փորձեցին յարձակումներ գործել Բօրժիմօվ և Գումին գիւղերի շրջանում ինչպէս յունվ. 11-ի երեկոյեան, այնպէս էլ յունվ. 11-ի ընթացքում, բայց վանվեցին, կրելով խոշոր կորուստներ։ Սկերնէվիցից դէպի հիւսիս-արևելք մեր թնդանօթները լռեցրին գերմանական երկու մարտկոց։

Գալիցիայում թշնամին ուժեղ գործունէութիւն է ցոյց տալիս Եասլիկա-Ուժօկ զօրաճակատի հանդէպ։ Բացի թնդանօթաձգութիւնից, թշնամին մի քանի կտրուկ յարձակումների դիմեց մի քանի ուղղութեամբ, բայց համարեա ամենուրեք ետ մղվեց։ Մենք գերեցինք 3 օֆիցէր և մօտ 300 զինուոր։

Բուկօվինայում էական փոփոխութիւն չը կայ։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Ձալտիչէնից հաղորդում են, որ աւստրիացիք շարունակում են ստանալ օգնութիւն։ Վերջին օրերում Բուկօվինայում, Կիրլիբաբայի մօտ, նրանց օգնութեան հասան եօթ դաշտային թնդանօթ և երկու խոշոր լայնաբերան թնդանօթ Դօրնավատից, լանդշտուրմի երկու գումարտակ, 250 ռումինական լեգէօններ և մի քանի խումբ ժանդարմներ։ Սպասվում են մի քանի գունդ բաւարական լանդշտուրմ։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Մախօրնիցից հաղորդում են, որ ռուսների խիզախ առաջխաղացումը շարունակվում է յամառութեամբ։ Եակօբենի քաղաքը գրաւված է ռուսներից, որոնք, մտնելով Ունգարիա, հասել են Իօվիֆալվ քաղաքին։ Դօրնաւատ քաղաքին լուրջ վտանգ է սպառնում։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Յունվարի 11-ին Վիսլայի և Մլավայի երկաթուղու շրջանի միջև ընկած ռազմավայրում էական փոփոխութիւններ չեղան։ Շարունակվեցին ընդհարումները միայն փոքրիկ զօրամասերի միջև և տեղի ունեցաւ թնդանօթաձգութիւն։ Վիսլայի ձախ ափում նոյնպէս հանգիստ է։ Բօրժիմօվօյից դէպի հիւսիս յունվարի 10-ին գերմանացիներին աջողվեց գրաւել մեր դիրքերից մէկը։ Յունվարի 11-ին, մօտաւորապէս նոյն շրջանում գերմանացիք փորձեցին յարձակվել և նոյնիսկ կարողացան մէկ-մէկ խրամատները տիրել, որոնց իրանք էին թողել, սակայն մեր ուժեղ կրակից նրանք ստիպված էին ետ քաշվել։ Մեր թնդանօթային կրակը յունվարի 11-ին բաւականին դժուարացրեց գերմանացիների տեղաշարժումները։ Մի տեղում մենք ցած գլորեցինք գերմանական զրահապատ մի աւտոմօբիլ, որ դուրս էր եկել մեր դիրքերը ռմբակոծելու համար։

Գալիցիայում աւստրիացիք սկսել են եռանդուն գործունէութիւն, սկսած Դուկլինի լեռնանցքի մօտից։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բզուրա գետի մօտ գերմանացիք երբեմն կրակում են այնպիսի թնդանօթներից, որոնք տարածում են խեղդող գազեր։

Գերմանական մի «Ցէպպելին» Լիբավայի վրա մի քանի ռումբ նետելուց յետոյ, կամեցաւ անյայտանալ Բալտիկ ծովում, բայց ռուսական նաւերից արձակված թնդանօթներից «Ցէպպելինը» ընկաւ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

13 յունվարի

ՓԱՐԻԶ.— Հաւասի գործակալութիւնը հաղորդում է. «Բէլգիայում մենք մասամբ առաջացանք Սէն-Ժօրժից դէպի արևմուտք։ Մնացած զօրաճակատներում տեղի էր ունենում միմիայն թնդանօթաձգութիւն։ Բէրրի-օ-Բակ շրջանում մենք վանեցինք թշնամու հակայարձակումը։ Շամպայնում մենք քանդեցինք գերմանական մի քանի ամրութիւններ։ Արգօններում գերմանացիների ուժեղ հրացանաձգութիւնը մենք լռեցրինք մեր թնդանօթների շեշտակի կրակով։ Մասի վրա մեր թնդանօթները վերջնականապէս քանդեցին Սէն-Միէլի կամուրջը։ Լօթարինգիայում, Էմբէրմէնիլի մօտ մենք շրջապատեցինք բաւարական մի զօրամաս և վերցրինք այն գերի։ Վօգէզներում և Էլզասում խիտ մառախուղը արգելք է լինում ռազմի գործողութիւններին»։

Յունվարի 5-ին անգլիական զօրքերի ընդհանուր հրամանատարը դիտեց բազմաթիւ հեծելագնդերին, որոնց կազմի մէջ կան շատ հնդկական զօրամասեր։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

13 յունվարի

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Օրշովից հաղորդում են, որ անընդհատ գալիս են աւստրօ-գերմանական զօրքեր, որ եռանդով արշաւանքի են պատրաստվում Սերբիայի դէմ։

Աւստրիական աէրօպլանները յունվ. 11-ին թռիչք կատարեցին Սերբիայի վրա և երեք ռումբ նետեցին Կլադօվօ և Տէկիա նաւահանգիստների վրա, որից յետոյ դիմեցին Ռումինիայի սահմանները Վէրչիօրօվայի կողմը։ Աւստրիական օդագնացը ծածանեց ռումինական դրօշակ, բայց, չը նայած դրան, հանդիպեց ուժեղ կրակի ռումինական պահակակէտերից։

Սերբիա ներս խուժելու որոշված աւստրօ-ունգարական զօրքերը բաղկանալու են բացառապէս աւստրիացիներից, գերմանացիներից և ունգարներից։ Օրշովայի շրջակայքում գտնվող գերմանական զօրքերը դիմում են դէպի Պանչէվօ։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

13 յունվարի

ԼՕՆԴՕՆ.—Մամուլի բիւրօն յայտնում է, որ անգլիական «Վիկնօր» յածանաւը իր բոլոր նաւաստիներով խորտակվել է Իռլանդիայի հիւսիսային ծովափի մօտ փոթորկից կամ ստորջրեայ ականից։

ՄԱԼՄԷ.—Լուրեր են պտտվում, որ երեկ գերմանական «Գազէլ» յածանաւը ենթարկվել է անյայտ ազգութեան ստորջրեայ նաւերի յարձակման։ Մանրամասնութիւններ չը կան։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Գերմանական շոգենաւը, որ գնում էր Զասսնիցից, ստիպված է եղել վերադառնալ, որովհետև ճանապարհին տեղեկութիւն է ստացել, թէ Արկօնի մօտ նկատվել են ստորջրեայ նաւեր։

ՀՌՈՄ.—Սիրակուզայից տեղեկացնում են, որ գերմանական «Զիգմարինգէն» նաւի վրա հրդեհ է ծագել։ Շոգենաւը բռնած 10 ժամ ուժեղանալը նետել է ափը։

ՓԱՐԻԶ.—Պուանկարէն նախաճաշ տուեց ի պատիւ գեներալ [illegible], որին ներկայ էին Իզվոլսկին, ռուսաց դեսպանատան պաշտօնեաները, մինիստրները Դիլկասէն, Միլէրանը, գեներալներ Ֆլօրանտէնը, Ժօֆֆրը և Պօն, որ այս օրերս մեկնելու է ռուսաց գլխաւոր բանակը՝ յանձնե յու Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչին շքադրամներ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Վերադարձաւ սանիտարական մասի Գերագոյն պետ պրինց Օլդէնբուրգսկին։

Նորին Կայսերական Մեծութեանը ներկայացաւ պատուաւոր պալատական վիրաբոյժ Րէյնը՝ զեկուցանելու Կուրօրտային համագումարի որոշումների մասին։

Ի հերքումն լրագրական տեղեկութիւնների, պալատի մինիստր կոմս Ֆրեդէրիկսի առողջական դրութիւնը շատ լաւ է. Նա ընդունում է սովորական զեկուցումները և դուրս է գալիս տնից։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

✦ Վերջին օրերս Իտալիայից մեկնել են 40,000 գերմանացի։ Բեռլինի իտալական դեսպանը հրաժարվել է իր պաշտօնից։

✦ Գերմանացի օդագնացները շարունակում են ռումբեր նետել Վարշավայի վրա։ Միաժամանակ նրանք ձեռնարկել են օդային յարձակումներ Լօնդօնի և Պարիզի վրա։

✦ Տօկիօյում հաստատվել է մի կոմիտէ, որի պաշտօնն է 70,000 կամաւոր զինուոր ցուցակագրել՝ Եւրոպա ուղարկելու համար։ 40 միլիօն իէն ծախքն արդէն ձեռք է բերված նուիրատուութիւններով։

✦ Արքիդուքս Կարլ-Ֆրանց-Յովսէփին Գերմանիայում ընդունել են սառը, որովհետև նա փորձում է համոզել Վիլհէլմ կայսրին, թէ անհրաժեշտ է Աւստրիայի համար սեպարատ հաշտութիւն, մինչդեռ Գերմանիայում վճռված է պատերազմը շարունակել մինչև իր ծայրայեղ վախճանը։

✦ Յունաստանում ձեռնարկված է զօրահանութեան։

✦ Աւստրիան և Գերմանիան պահանջեցին Ռումինիայից թոյլ տալ հաց անցկացնել, սպառնալով այլապէս խզել իրանց կապերը նրա հետ։

✦ Գերմանիան մտադիր է բէլգիական գահն առաջարկել իշխան Օտտո Վինդիշկրէցին, որի ամուսինը Ֆրանց-Յովսէփ կայսրի քրոջ աղջիկն է։

✦ Շվէդական մամուլի ասելով, Լեհաստանում գերմանացիք աստիճանաբար փոխարինում են իրանց զօրքերը աւստրիականով։

✦ 4 գերմանական և 6 աւստրիական զօրաբանակ արշաւանքի են ձեռնարկել Սերբիայի վրա։ Բէլգրադը դատարկվել է ազգաբնակութիւնից։

✦ «В. Вр.»-ին հեռագրում են Պարիզից, որ Ունգարիայում աւելի ու աւելի տարածվում է խօլերան։ Համաճարակը մեծ աւերածութիւններ է կատարում մանաւանդ Հէյլագ և Զօմբար քաղաքներում, ուր ամեն օր հիւանդութեան 200 դէպքեր են լինում։

✦ Լօնդօնի հեռագիրները, Բուդապեշտի տեղեկութիւնների համաձայն, հաղորդում են, որ ամբողջ Ունգարիան դէմ է պատերազմի յետագայ շարունակութեան։ Յունվարի 13-ին Ունգարիայում նշանակված է եղել 278 միտինգ պատերազմի դէմ։

✦ Լօնդօնից հեռագրում են, որ դիպլոմատիական հեղինակաւոր աղբիւրից յայտնի է, որ երիտասարդ Թիւրքերը, աւստրիական գործակալների հետ համաձայնութիւն կայացրած, գործում են Էսսադ-փաշայի դէմ։ Բացի այդ, նրանք պրօպագանդա են մղում այն նպատակով, որ Ալբանիայում շարժում առաջացնեն Սերբիայի դէմ։ Լօնդօնի դիպլոմատները երիտասարդ Թիւրքերի քաղաքականութեանը Ալբանիայում վերաբերվում են խիստ լուրջ և նրանում նոր բարդութիւնների սպառնալիք են նկատում։

✦ Դիւնկերկի ռմբակոծութեան ժամանակ վիրաւորվել է ամերիկական հիւպատոս Լօրէդ։

✦ Գեներալ Ֆօլկենհէյմը յայտնել է ամերիկական հեռագրական գործակալութեան ներկայացուցչին, որ Գերմանիան կարող է դեռ ևս երկար կռիւ մղել։ Եթէ վերջ ի վերջոյ գերմանական բանակը սկսի նահանջել, նա պէտք է կռուի մինչև վերջին մարդը, կատաղի կերպով պաշտպանելով ամեն մի տրանշէն։

✦ Գերմանական կղերականների լիդէր Զէյդլից պահանջում է վերացնել հաշտութեան պայմանները հրապարակօրէն քննելու արգելքը։ «Գերմանական ժողովրդի հոգին,—գրում է նա,—յուզված է, և կարող է ապստամբութեան վտանգ ծագել»։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՍԵՆԱՏԻՆ

(Պաշտօնական)

(Պետ. Հեռ. Գործ.)

I

Պետրօգրադ, 12 յունվարի

Պետական Հիմնական Օրէնքների 99-դ յօդուածի հիման վրա, համաձայն 1914 թ. յուլիսի 24-ին կառավարիչ սենատին Մեր տուած հրամանի, հրամայում ենք Պետական Խորհրդի զբաղմունքները վերսկսել 1915 թ. յունվ. 17-ին։

Կառավարիչ սենատը չի յապաղի առ այս պատշաճ կարգադրութիւնը տնօրինելու։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է՝ «ՆԻԿՈԼԱՅ»։

Ցարսկոյ Սելօ, 11 յունվ. 1915 թ.։

Ճշգիւ՝ մինիստրների խորհրդի նախագահ ստատս-սեկրետար Գորեմիկին։

II

Պետրօգրադ, 12 յունվարի

Պետական Հիմնական Օրէնքների 99-րդ յօդուածի հիման վրա և 1914 թ. յուլիսի 24-ին կառավարիչ սենատին Մեր տուած հրամանի համապատասխան, հրամայում ենք Պետական Դումայի զբաղմունքները վերսկսել 1915 թ. յունվ. 27-ին։

Կառավարիչ սենատը թող ի կատարումն սրա պատշաճ կարգադրութիւնը անէ։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է՝ «ՆԻԿՈԼԱՅ»։

Ցարսկոյ Սելօ, 11 յունվ. 1915 թ.։

Ճշգիւ՝ մինիստրների խորհրդի նախագահ ստատս-սեկրետար Գորեմիկին։

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

12 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Բացվեց Պետական Դումայի բիւջէտային մասնաժողովի նիստը։

Ներկայ են ֆինանսների մինիստրի փոխարէն պետական վերահսկիչ Խարիտոնովը, արտաքին ու ներքին գործերի, արդարադատութեան, ճանապարհների հաղորդակցութեան, առևտրի և արդիւնաբերութեան մինիստրները, ժողովրդական մինիստրութեան կառավարիչը, զինուորական մինիստրի փոխարէն—նրա օգնական գեներալ Վէրնանդէրը, արդարադատութեան մինիստրի օգնական Վերեւկինը, ներքին գործերի մինիստրի օգնականներ Ջունկովսկին և Զօլոտարեւը, վարչութիւնների բազմաթիւ ներկայացուցիչներ, բիւջէտային մասնաժողովի անդամները համարեա ամբողջ կազմով և Պետական Դումայի շատ անդամներ։

Նախագահում է Ալեքսէենկօն։

Սկսվեցին ընդհանուր վիճաբանութիւններ բիւջէի մասին։

Պետական վերահսկիչը իր բացատրութեան մէջ վկայում է, որ պատերազմական արտակարգ հանգամանքների հետ Ռուսաստանի տնտեսական դրութիւնը մասնակի փորձութեան է ենթակայ, սակայն խիստ վնաս ազգաբնակութիւնը չը կրեց։ Ազգաբնակութեան տնտեսական բարեկեցութեան մակարդակի բարձրանալու պատճառ անպայման հանդիսանում է ոգելից ըմպելիքների գործածութեան արգելքը, որ բղխեց բարձրագոյն իշխանութիւնից։ Դրա ապացոյց ստատս-սեկրէտար Խարիտոնովը մատնանշում է, որ ժողովրդական խնայողութիւնները 1913 թ. դեկտեմբերին կազմում էին 700,000 ռուբլի մինչդեռ 1914 թւի դեկտեմբերին — 29,100,000 ռուբլի։ 1914 թւի յունվարի առաջին շաբաթներում խնայողական գանձարանները մուտք ունեցան 300,000 ռուբլի, իսկ 1915 թ. միևնոյն շաբաթներում—13,3000,000 ռ.։ 1913 թ. ընդհանուր ի պահ դրված գումարների քանակը կազմում էր 34 միլիօն, իսկ 1914 թ. —84 միլիօն։

Գօդնեւը հարց է տալիս՝ հանդիսանում է, արդեօք, ոգելից ըմպելիքների վաճառման արգելքը մշտական օրէնք, թէ ժամանակաւոր միջոց է, ձեռնարկված բարձրագոյն կառավարութեան կարգով։

Պետական վերահսկիչը բացատրում է, որ ֆինանսական մինիստրութեանը օրէնքով իրաւունք է տրված փակել արքունի գինեկրպակները, որը նա, իրականացնելով Գերագոյն կամքը, անում էլ է։ Չը կայ նաև նուազեցումն օրէնսդրական հաստատութիւնների իրաւունքների՝ 87-րդ յօդուածի կարգով հարկային օրէնքներ հրատարակելու ժամանակ, որովհետև դրանք միաժամանակ կը ներկայացվեն օրէնսդրական քննութեան։

Շինգարեւը արտասանում է երկարատև ճառ այն մասին, թէ անհրաժեշտ է համաձայնեցնել մի քանի վարչական ձեռնարկութիւնները, միացնելով բոլոր հասարակական շրջանները, նաև առաջարկում է մտցնել պրօգրեսիվ եկամտային հարկ։

Ժամը 1 ու 15 րոպէին յայտարարվում է ընդմիջում։

13 յունվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ։ Նիստին ներկայ են մինիստրների խորհրդի նախագահ, ֆինանսների մինիստրի փոխարէն—պետական վերահսկիչ Խարիտոնովը, հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը, ծովային մինիստրը, ժող. լուս. մինիստրութեան կառավարիչը և բոլոր վարչութիւնների մինիստրների օգնականները։

Նախագահում է Ալեքսէենկօն։

Տիտօվը հարց է բարձրացնում վալիւտայի անկայունութեան պատճառների մասին։ Վարկային գլխաւոր կառավարիչ Նիկիֆորովը այդ հարցի առիթով տալիս է բացատրութիւններ, որոնց չի կարելի հրատարակել։

Շինգարեւը խօսում է վագոնների սովի մասին։ Ստատս-սեկրետար Խարիտոնովը յայտնում է, որ վագոնների սովը կը բաւարարվի տրված պատուէրներով։ Իսկ ապրանքների վրա դրված հարկը կը ստացվի միմիայն մի տարվայ ընթացքում։

Դզիւբինսկին տարակուսում է ազատ-տնտեսական ընկերութեան կազմած գրադարանների առաքման արգելքի առիթով։ Ներքին գործերի մինիստրի օգնական Ջունկովսկին բացատրում է, որ վիրաւորների համար ընթեռնլի գրքերի ցուցակը շատ կարճ է։

Զամըսլովսկին խօսում է պրօգրեսիվ-եկամտային հարկի և Ֆինլանդիայի մասին, որը Ռուսաստանի նման ոչ մի զոհաբերութիւն չէ անում պատերազմի ժամանակ մարդկանցով։

Կերէնսկին գտնում է, որ բիւջէն կազմված առաջվայ նման թերի կերպով, որից տուժելու է ազգաբնակութեան աղքատ մասը։

Պոստնիկովը երկար ճառով ապացուցանում է, որ ելևմուտը և զինուորական ծախքերը կապված չեն իրար հետ։

Ջխէիձէն քննադատում է Ներքին քաղաքականութեան ուղղութիւնը և ասում է որ բանւոր դասակարգը մնում է իր Նախկին դիրքում, իսկ Ներկայ քաղաքական կուրսի համար կը պատասխանէ ոչ միայն կառավարութիւնը, այլ և Նրան աջակցող դասակարգերը։

Ներքին գործերի մինիստրի օգնական Զօլոտարեվը տալիս է բացատրութիւններ շօշափած հարցերի առիթով։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

13 յունվարի

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ. — Երէկ առաւօտեան զգացվեց 3 վայրկեան ուժեղ երկրաշարժ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆ-ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ

Յունվարի 8—12-ին ստացել ենք 1) Ղըշլաղ գիւղից, Հայ. Մասնախմբից, յանձնելի Նպաստամատոյց Ընկերութեան 30 ր., 2) Իւզովկայից, Կ. ք. Դաւթեանի միջոցով, հանգանակված տեղական հայերի մէջ, յանձնելի Հ. Կենտր. Կոմիտէտին 200 ր. (ցուցակը կը տպվի), 3) Ախալցխայից ա) փոքրիկներ Սաշա և Կօլիա Ակօբջանեաններից 10 ր., բ) տ. Եղ. Ջաթալբաշեանից 5 ր., 4) Գրօզնիից, Հ. Դաւթեանի ձեռքով հանգանակված եղբարց Ծատուրեանների նաւթահանքի ծառայողներից և բանւորներից 54 ր., 5) Ումանսկայա կայարանից, Ս. Ս. Ներսէսեանից, ի յիշատակ իր ծնողաց, 60 ր., 6) Թիֆլիսում ա) տ. Մ. Աֆրիկեանից 5 ր., բ) կոյս Ալիխանեանի միջոցով հանգանակված Ղարագեօզեանների տանը մկրտութեան ժամանակ հանդիսականներից 11 ր. 20 կ., գ) Արտէմ Սահակեանից և ընտանիքից, Զաւադ-բէկ Բալուղեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն 5 ր., դ) Գ. Տէր-Պետրոսեանից 6 ր., 7) Ախալքալաքից, մի տիկնոջից, Խաչ. ք. Փանեանի միջոցով, յանձնելի Նպաստամ. Ընկերութեան 50 ր., 8) Ղզլ-Արվադից տ. Ա. Բալասանեանից 3 ր. և Խաչ. Բալասանեանից 7 ր., 9) Ալուպկայից, Ց. Ցովնանեանի և Խ. Եղիազարեանի ձեռքով հանգանակված տեղական հայերի մէջ 83 ր. 50 կ., 10) Թիֆլիսում, ա) Արշակ Յարութիւնեանի որդու մկրտութեան հանդէսին հանգանակված 18 ր., մի տիկնից 5 ր., գ) Ալ. Ստեփանեանից, Զաւադ-բէկ Բալուղեանի վրա պսակ դնելու փոխարէն 3 ր., 11) Մակեէվկայից, Յակոբ Քոսեանից 25 ր., 12) Սումից, Ս. Ալլահվերդեանից 40 ր., 13) Կարսից, բժ. Գ. Սարգսեանից 6 ր., 14) Նոր-Բուխարա, ա) Զօհրաբ Բալայեանից 5 ր., բ) Աբգար Թաւաղեանից 5 ր., 15) Թիֆլիսում, ատամնաբոյժ Մ. Դանիէլ-բէկից 1 ր.։ Գումարն է 617 ր. 70 կ.։ Նախորդ ստացված 4733 ր. 38 կ. գումարի (տես «Մշակ» № 5) հետ ստացել ենք ընդամենը 5351 ր. 08 կ.։

Ծանօթ. Խմբ.—Ի նկատի ունենալով, որ նորակազմ Նպաստամատոյց Ընկերութիւնը բացառապէս զբաղվում է փախստական-գաղթականների խնամատարութեան գործով, խմբագրութիւնս որոշեց գործադրել այս գումարները նրա միջոցով, յանձնելով նրան գումարները յօգուտ փախստականների։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Գերապատիւ Եփրեմ, Բագրատ, Մատթէոս եպիսկոպոսաց և բարձրապատիւ Գարեգին, Բաբգէն և Վրթանէս վարդապետաց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն հայրապետական։

Դարձեալ լսեմք ի Հայաստան աշխարհէ զողբս և զաղաղակս անօգնական և անպաշտպան սիրելի զաւակացս Գիտէք արդէն, զի ի վերջին աւուրս յանկարծակի թշուառութիւնք և սոսկալի արհաւիրք եկին հասին ի վերայ զաւակացս, յորոց բազումք թողեալ զհայրենի տունս և զամենայն ստացուածս իւրեանց ի Տաճկա-Հայաստանէ և յԱտրպատականէ, սարսափահար և խելակորոյս լեալ, փախեան ի սահմանս մեր և այսօր հազարաւոր թշուառ կանայք և անմեղ մանկունք և ծերք, ժողովեալք աստ ս. Էջմիածին, ընդ հովանեաւ Մայր Աթոռոյս, խնդրեն ի Մէնջ զօգնութիւն։

Ցանկացեալ Մեր ընդ փոյթ հասանել յօգնութիւն արկածելոց, դիմեցաք առ պարտաճանաչ հոգևոր որդիս Մեր, յորոց ոմանք շարժեալ մարդասիրական և յեղբայրսիրական վեհ զգացմանց՝ ազնուաբար արկին զլումայս իւրեանց յազգային գանձանակ վասն փրկելոյ զկեանս արկածելոց և տառապելոց։

Արդ՝ անհրաժեշտ համարելով զկազմակերպումն քրիստոնէական օգնութեան վասն հազարաւոր զաւակացս, այսու Հայրապետական Կոնդակաւս նշանակեմք զՁեզ անդամս Կարգադիր Յանձնաժողովոյ եղբայրական օգնութեան ընդ անմիջական հսկողութեամբ և տնօրինութեամբ Մերով և պատուէր տամք Ձեզ կատարել զխնամս զայս.

ա) Փութով ժողովել ի մի զամենայն տեղեկութիւնս զհայ գաղթականաց, որք ի պատճառս ռուս-թիւրքական պատերազմի՝ թողեալ են զտունս և զստացուածս իւրեանց և գտանին ի թշուառ կացութեան, ցրուեալք յայլ և յայլ տեղիս։

բ) Քննել ի ձեռն մասնաժողովոց, ներկայացուցչաց և վստահելի անձանց զվիճակ նոցա և զհետեւանացն յայտ առնել Մեզ ի տնօրինութիւն։

գ) Մտանել ի բանակցութիւն ընդ Յանձնաժողովս եղբայրական օգնութեան, հաստատեալս Կոնդակաւք Մերովք ի զանազան քաղաքս, տալով նոցա զկարևոր տեղեկութիւնս վասն գաղթականաց և խնդրելով ի նոցանէ զտեղեկագիրս գործունէութեան իւրեանց, մատուցանել Մեզ ի գիտութիւն։

դ) Միաւորել զգործունէութիւնս ամենայն յանձնաժողովոց եղբայրական օգնութեան և, ի դէպս անհրաժեշտութեան, նախապէս ընկալեալ ի Մէնջ զկարևոր հրահանգս, հրաւիրել աստ ի ս. Էջմիածին զներկայացուցիչս նոցա ի խորհրդակցութիւն՝ վասն որոշելոյ զընդհանուր սկզբունս գործունէութեան յօգուտ գաղթականաց։

ե) Խորհրդակցել պարբերաբար ընդ ներկայացուցիչս մերձակայ քաղաքաց և սահմանագլուխ աւանից վասն կանոնաւորապէս պահպանելոյ և բնակեցուցանելոյ զգաղթականս ի շրջակայ գիւղօրայս, յայսմ ցրտագին եղանակի։

զ) Խնամել ըստ ամենայնի և տալ նոցա զբժշկական օգնութիւնս, սփոփել և մխիթարել զնոսա հոգեպէս։

է) Ստանալ ի սինոդէ ս. Էջմիածնի զժապաւինեալ մատեան և պահել զամենայն հաշիւս կանոնաւորութեամբ և կանխագոյն թոյլտուութեամբ Մերով ստանալ ի գանձապահէ Մայր Աթոռոյս զանհրաժեշտ դրամս ի նուիրատուութեանց յօգուտ գաղթականաց։

Լիայոյս եմք, զի Դուք, որդեակք հոգևորք, առաջի աչաց ունելով զողբալի և զյուսահատ վիճակ և զսոսկալի տառապանս գաղթականաց մերոց, գործեսջիք ամենայն եռանդեամբ և անձնուիրութեամբ ի թեթևացումն ազգային աղէտից։

Լիայոյս եմք նոյնպէս, զի գերապատիւ առաջնորդք, յանձնաժողովք եղբայրական օգնութեան, ազգային գործիչք մեր, բարեգործք և կարողաւորք յամենայն կողմանց փութով օժանդակեսցեն նուիրատուութեամբք իւրեանց վասն դժբաղդ գաղթականաց մերոց։

Աղօթեմք առ Աստուած վասն փրկութեան ազգիս հայոց յամենայն վտանգից և ի փորձութեանց։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք ս. Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 28 դեկտեմբերի 1914 ամի.
ըստ տոմարիս ՌՅԿԴ
ի Հայրապետութեան Մերում Գ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի.
ի Վաղարշապատ
Թ. 1990.

ԵՐԳՎԵՑ ՀԻՆ ԵՐԳԸ

Կրկնվեց այն, ինչ որ եղաւ 1906—7 թւականներին։

«Մշակի» հակառակորդները, անզօր պայքարելու մեր դէմ հոգևոր զէնքով՝ գրչով, որ միակ վայելուն է հրապարակախօսի, գրողի համար, սպառնացին մեզ այլ միջոցների դիմել։

Բայց մենք, որ մեր ամբողջ կեանքի, մեր 45-ամեայ գործունէութեան մէջ ունեցել ենք մի հատիկ զէնք, հոգևոր զէնք՝ գրիչը, մենք կը շարունակենք նոյն զէնքով պայքարել այն ամենի յաղթանակի համար, ինչ որ մենք համարում ենք ճշմարտութիւն, ինչ որ թելադրում է մեր մաքուր խիղճը, մեր հաւատը և սէրը առ մեր դժբաղդ և թշուառ հայ ժողովուրդը։

«Մշակի» ընթերցողները կը վկայեն, որ «Մշակը» այն օրից, երբ ծագել է հայ կամաւորների խնդիրը, վերաբերվել է այդ խնդրին և իրանց կամաւորներին ամենամեծ համակրութեամբ, սիրով և քաջալերութեամբ։ «Մշակի» մէջ տպվել են միայն ներբողական յօդուածներ կամաւորների հասցէին, ոչ մի տող, ոչ մի խօսք, թէ նրանք հարկաւոր չեն, կամ նրանք չեն ծառայում իրանց կոչման և այլն։ Ընդհակառակը նոյն իսկ հանգանակութիւն է բացվել «Մշակի» մէջ նրանց օգտին։ Միայն, երբ երևացել են նշաններ, որ ձգտումն կայ մի որոշ հասանքի կողմից խտրութիւն դնել այս կամ այն կամաւորի մէջ, նայելով նրա պատկանած քաղաքական հոսանքին, «Մշակը» աշխատել է հասկացնել տալ, թէ մենք ներկայումս չունենք այս և այն կուսակցութեան կամ հոսանքին պատկանող կամաւորներ, այլ մենք ունենք միայն հայ կամաւորներ, ազգային կամաւորներ։ Ամենքը կոչված են անխտիր ծառայելու։ Եւ այս արել ենք անցողակի կերպով, յոյս ունենալով որ այն մարմինը, որը ղեկավարում է կամաւորների գործը, այն է Հ. Կենտրոն. Բիւրօն, ուշադրութեան կառնէ։ Սակայն երբ յայտնագործվեցին մի քանի ցաւալի դէպքեր, օրինակ՝ Աստրախանից այնքան մեծ ոգևորութեամբ և ցնծութեամբ ուղարկված կամաւորների դէպքը, Ռումինիայից և Բօլգարիայից եկած 190 կամաւորների դէպքը, երբ սկսեց տեղեկութիւններ և գանգատներ հասնել մեզ, թէ ռազմաբեմի վրա գործող կամաւորները նեղութիւն են քաշում ուտելիքի, ծխախոտի և այլ կարիքների կողմից, երբ պարզվեց, որ բոլոր այդ ցաւալի դէպքերի գլխաւոր և գուցէ միակ պատճառն այն է, որ Բիւրօյին կից կայ մի այլ մարմին, կոչված զինուորական, որ բաղկացած է ամբողջովին մի որոշ կուսակցութեան մարդկանցից և այդ մարմինն է որոշում կամաւորների գործը և, դժբաղդաբար, ղեկավարվում է զուտ կուսակցական նկատումներով, մենք զետեղեցինք «Մշակի» № 4-ի մէջ Տ-ի յօդուածը՝ «Պէտք է կանոնաւորել» վերնագրով։

Մենք խնդրում ենք հայ ընթերցողից և կամաւորներից կարդալ նորից այդ յօդուածը և տեսնել, թէ արդեօք կա՞յ նրա մէջ որևէ անհամակրական կամ անբարեացակամ խօսք հայ կամաւորների հասցէին։ Ոչ, չը կայ. ընդհակառակը, հեղինակը ողջունում է կամաւորների հանդէս գալը հայկական իրականութեան մէջ, միայն միջոց է առաջարկում կանոնաւորել այդ մեծ գործը՝ վերոյիշեալ ցաւալի դէպքերի նման դէպքերից խուսափելու համար։ Եւ իբրև միջոց նա առաջարկում է, որ կամաւորները մտնեն ռուսական զօրքերի շարքերի մէջ։ Եւ խնդրի այդպիսի լուծումը անօրինակ չէ, նոր չէ. Նա ունի իր նախընթացը։ 1877—78 թ. ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ հայերը կազմեցին կամաւորների մի ջոկատ կամ գումարտակ, այն է՝ հայ դրուժինաների գումարտակ, որ գտնվում էր ռուսական զօրապետների հրամանատարութեան ներքոյ և որի ծախքը հոգում էր ինքը կառավարութիւնը։ Ահա և ներկայումս հայ կամաւորներից կարելի էր կազմել հայկական դրուժինաների գումարտակ, որ կը գործէր իբրև հայկական գումարտակ, բայց ռուսական զօրապետների հրամանատարութեան ներքոյ, և որի ծախքը ամբողջովին կը հոգար կառավարութիւնը։ Չէ որ այժմ վրացիների և Թուրքերի այդպիսի կամաւորների գումարտակները այդ ձևով են կազմված։

Ամենայն դէպս սա մի առաջարկ է, որի նպատակը եղել է վերացնել որոշ ցաւալի դէպքեր։ Այդ առաջարկը կարող է հիմնաւոր կամ անհիմն լինել, կարելի է ցոյց տալ նրա անյարմարութիւնը, անիրագործելիութիւնը, սխալը. կարելի է ցոյց տալ, որ ներկայ ձևը աւելի լաւ է և յարմար։

Սակայն այդպէս չեն վարվում մեր հակառակորդները։ Նրանք Տ-ի ամբողջ ընդարձակ յօդուածը մի կողմն թողնելով՝ վերցնում են նրանից մի կտոր՝ «թող հայ կամաւորները մտնեն ռուսական զօրքերի շարքերի մէջ» և այդ հիման վրա անտեղի դատողութիւններ անում։

Բայց մենք բնաւ մտադիր չենք նոյն եղանակով պայքարել մեր հակառակորդների դէմ, որոնք թոյլ են տալիս իրանց յեղաշրջել, աղաւաղել մեր մտքերը և իրանց ցանկացած եզրակացութիւնն անել։ Մենք ընթերցող հասարակութեանն ենք թողնում դատել, թէ որքան վայելուչ և արժանաւոր է գրչի մարդկանց կողմից այլ զէնքերով սպառնալ իրանց հակառակորդներին և գրգռել կրքերը....։

Ինչ վերաբերում է պ. Գր. Չալխուշեանի յօդուածին, որ տպվել է տեղական մի թերթում «Մշակի» և իմ դէմ, ես ներկայ րոպէին անյարմար եմ գտնում պատասխանել նրան, յայտնագործել այն ամենը, ինչ որ կարող է ջախջախիչ փաստերով հերքել նրա յերիւրեալ կերպով ասածները։ Կասեմ միայն, թէ ես չէի կարծում, որ պ. Գր. Չալխուշեանը իրան գրված մասնաւոր, կոնֆիդենցիալ նամակից, առանց իմ թոյլտուութեան, քաղուածքներ կանէր, այն էլ աղաւաղեալ ձևով։ Դա էլ էտիկայի, դաստիարակութեան և ճաշակի գործ է. բայց իսկական կուլտուրական մարդը այդպէս չէր վարվի։

Հ. Ա.

ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հայ Նպաստ. Ընկերութեան վարչութեան նիստը կայացաւ Ընկերութեան նորընտիր նախագահ Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեանի բնակարանում, յունվարի 11-ին, կիրակի, երեկոյեան ժամը 7—10-ին։

Նիստը բացեց Ընկերութեան փոխ-նախագահ Հ. Առաքելեան, որ համառօտ զեկուցումն անելով վարչութեան գործունէութեան մասին, սկսեալ դեկտ. 28-ից մինչև այդ օր, ծանօթացրեց նոր նախագահին եղած որոշումների և կարգադրութիւնների մասին և շնորհաւորելով նոր նախագահի ընտրութիւնը՝ յոյս տածեց՝ որ նրա օրով

Ընկ.-ը կը բարգաւաճէ և ներկայումս իբրև միակ մի հաստատութիւն, որ ունի կառավարութիւնից հաստատված կանոնադրութիւն և նպատակ՝ օգնելու հայ ժողովրդին աղէտների ժամանակ, ուրեմն մի միութիւն, այլ ոչ-պատահական կազմ ունեցող մարմին, անկասկած, կոչված է մեծ դեր խաղալու, որպիսին նա խաղաց, իբրև Ցանձնաժողով, 1905—1910 տարիների շրջանում։ Ապա յանձնելով նախագահութիւնը պ. Աւան-Իւզբաշեանին յայտնեց, որ օրակարգի առաջին խնդիրը՝ նիւթական միջոցների որոշումն և բազմացումը պէտք է լինի։

Նիստին մասնակցելու հրաւիրված էր և վաճառականների աւագ պ. Ա. Մելեանը, որ ցանկութիւն յայտնեց լինել Ընկերութեան մշտական անդամ։

Նորընտիր նախագահը շնորհակալութիւն յայտնելով իր ընտրութեան համար՝ ասաց, որ ներկայ Ընկերութիւնը, արդարև, մեծ ապագայ ունի և գործունէութեան լայն ասպարէզ՝ մանաւանդ ներկայ ժողովրդական աղէտի ժամանակ։ Նա վերին աստիճանի նպատակայարմար համարեց Ընկերութեան որոշումը միջնորդելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ գումարել խորհրդակցութիւն համանման նպատակ ունեցող կազմակերպութիւնների ներկայացուցիչներից թէ գործունէութեան մի ընդհանուր պլան մշակելու և թէ աշխատանքի բաժանումն ու համերաշխութիւն հաստատելու համար։ Եւ որովհետև այդ նպատակով պ. Գր. Եւանգուլեանին ուղարկված հեռագիրը չէ հասել նրան, գտնվելով այլ տեղ, ուստի որոշվեց դիմել ուղղակի հեռագրով Վեհ. Կաթողիկոսին նոյն միջնորդութեամբ։

Ապա վարչութիւնը, յետ քննութեան, որոշեց մի շարք միջոցներ ձեռք առնել նոր Ընկերութեան միջոցները շատացնելու մասին։

Այդ առիթով նորընտիր նախագահ Դաւիթ խան Աւան-Իւզբաշեան յայտնեց, որ ինքը նուիրում է 10,000 ր. յօգուտ փախստական-գաղթականների։ Բացի դրանից, նա մտադիր է միջնորդել Փիթօյեվ և Ընկ. նաւթարդիւնաբերական ընկերութեան առաջ նուիրել Նպաստ. Ընկերութեանն անգլիացի նշանաւոր և այժմ հանգուցեալ ճանապարհորդ Լինչի երկհատոր գրքից (ռուսերէն թարգմանութիւնը) 500 օրինակ, որը կարելի է ծախել յօգուտ Նպաստ. Ընկերութեան և որից առնուազն կը գոյանայ 5000 րուբլի։ Ապա, իմանալով որ վարչութիւնը պէտք ունի գրասենեակի, յայտնեց, որ իր տանը յատկացնում է մի մեծ սենեակ այդ նպատակի համար ձրիաբար։

Վարչութիւնը յայտնեց Դաւիթ-խանին իր անկեղծ շնորհակալութիւնները։

Կարդացվեց պ. Տիգրան Նազարեանի գրութիւնը, որով յայտնում է, թէ ի նկատի ունենալով որ Նպաստ. Ընկ. անդրանիկ ընդհանուր ժողովը կայացաւ «Աղբիւր-Տարազի» Գրական-Գեղագիտական Սալօնում, ուստի Սալօնն էլ նուիրաբերում է իր լուման, տալով յօգուտ Ընկերութեան 10,000 օրինակ «Ս. Ղեւոնդ երէցը օրհնում է հայոց սպարապետ Վարդան Մամիկոնեանի դրօշակը» պատկերից, որ պատրաստված է արտասահմանում, շքեղօրէն, և արժէ հատը 1 ր. 50 կ., որը եթէ ծախվի յօգուտ հայ փախստականների հատը նոյն իսկ 50—20 կոպէկով, կը ստացվի 3000 րուբլուց աւելի արդիւնք։ Կարելի է կազմակերպել վաճառումը ոչ միայն Թիֆլիսում, այլ և գաւառներում և, անշուշտ, ամեն մի հայ տուն ուրախութեամբ կը վճարէ 50—20 կ. և կը գնէ, թէ իբրև զարդ և թէ նպատակն ի նկատի ունենալով։

Ժողովը որոշեց շնորհակալութիւն յայտնել պ. Տ. Նազարեանին իր համակրութեան և նուէրի համար ու կազմակերպել վաճառման գործը։

Տիկ. Իւլ. Սպէնդիարեան, յայտնելով այն ապաստարան-դպրոցի մասին, որ իշխ. Սոֆիա Վ. Արղութեան բաց է անում փախստականների երեխաների համար, աջակցութեամբ կանանց, առաջարկում է օգնել այդ ապաստարանին, տալով ամեն մի երեխայի օրեկան 12 կ. ծախքի մի մասը, այն է 5 կ. (միւս 5 կ. տալու է քաղաքային յանձնաժողովը, իսկ 2 կ. հոգալու է կանանց խումբը)։

Վարչութիւնը ուրախութեամբ յանձն է առնում։

Հ. Առաքելեան զեկուցեց մի հեռագիր, որ նա ստացել է Կարսից, բժ. Աթաբէկեանից, այս բովանդակութեամբ՝ «Աշխատեցէք բարեգործական ընկերութիւններից մէկի հաշւով շտապով ուղարկել երկու փորձառու գթութեան քոյրեր փախստականների լազարէթի համար. աշխատանքը ծանր է». և առաջարկեց, որ Նպաստամատոյցը յանձն առնէ իր ծախքով ուղարկել անմիջապէս այդ երկու քոյրերին։

Ժողովը միաձայն որոշեց դիմել Կարմիր Խաչի վարչութեան և խնդրել ուղարկել իր ծախքով գթութեան երկու փորձառու քոյրեր։

Ապա ժողովն որոշեց յանձնել Հ. Առաքելեանին և Ա. Աթանասեանին՝ գնալով Ալէքսանդրապօլ, Կարս, Սարիղամիշ և Ջուլֆա՝ հետազօտել իրերի վիճակը և զեկուցումն ներկայացնել։

—

Ամսիս 14-ին, չորեքշաբթի, Նպաստամատոյց Ընկերութեան նախագահ Դաւիթխան Աւան Իւզբաշեան ուղարկեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետևեալ հեռագիրը.

«Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին. Էջմիածին։

«Ընդհանուր ժողովը Նպաստամատոյց Ընկերութեան, որի գործողութեան բացման մասին հեռագրով զեկուցված է Ձեր Վեհափառութեանը յունվ. 3-ի հեռագրով՝ խնդրանօք ընդունել Ձեր բարձր հովանաւորութեան ներքոյ Ընկերութիւնը և օրհնել նրա գործունէութիւնը, որոշել է, ի կատարումն Ձեր Վեհափառութեան արձակած կոնդակի դեկտ. 28-ին, միջնորդել Ձեր Սրբութեան առաջ գումարել Էջմիածնում, Ձեր Վեհափառութեան նախագահութեան ներքոյ, խորհրդակցութիւն՝ փախստականներին օգնող բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչներից և մշակել աշխատանքի մի ընդհանուր ծրագիր։ Ընդհանուր ժողովի այդ որոշումը պատիւ ունեմ խորին յարգանքով զեկուցանել Ձեր Վեհափառութեան»։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

◆ Երևանից հեռագրում են. «Բագրատ եպիսկոպոսի ասելով, Արծափում գտնվում են մօտ 500 թողնված և մոռացված երեխաներ։ Էջմիածնից Կաթողիկոսի յանձնարարութեամբ Արծափ է մեկնում Բարգէն վարդապետը, որ հաւաքելու է երեխաներին և բերելու է Էջմիածին, ուր նրանց համար ապաստան է սարքվելու։ Յօգուտ փախստականների Էջմիածնում հաւաքված է 150,000 ր. նուիրաբերութիւն։ Տեղական լուրերի համաձայն, փախստականների թիւը Կովկասում հասնում է մինչև 90,000 հոգու»։

◆ Լոնդոնի հայ գաղութը 200 ֆունտ ստեռլինգ է փոխադրել Թիֆլիս՝ հայ փախստականների օգտին Մոսկվայի անգլիական հիւպատոսի միջոցով։

◆ Մոսկվայի հայկական կոմիտէտը Թիֆլիս է ուղարկել 1 վագօն տաք իրեր փախստականների համար։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօր, յունվարի 15-ին, առաւօտից սկսվում է երիտասարդների զինուորակոչութիւնը։ Կանչվում են այն երիտասարդները, որոնք ծնված են 1894 թ. յունվարի 1-ից մինչև նոյն թւի դեկտեմբերի 31-ը։ Ամսիս 15—16-ը քաղաքային «աշխատանքի բորսայի» մէջ կատարվելու է վերջնական ստուգութիւնը այն ցուցակների, որոնցով կանչվում են երիտասարդները։ Այս երկու օրը նորակոչների կողմից պէտք է ներկայացվեն ամեն տեսակ ապացոյցներ արտօնութիւնների և ուսումն աւարտելու ժամանակամիջոց խնդրելու մասին։ Իսկ յունվարի 17-ից կը սկսվեն քննութիւնները։

◆ Պատերազմից վնասվածներին օգնող կովկասեան գլխաւոր կոմիտէտը, որի նախագահուհին է կոմսուհի Ե. Ա. Վօրօնցով-Դաշկովան, փախստականների համար նուիրաբերութիւններ ընդունում է կոմիտէտի պահեստում, որը գտնվում է Երևանեան հրապարակի № 3 տանը, Փոխադարձ վարկի ընկ. բակում։ Ընդունելութիւնը տեղի է ունենում ամեն օր, բացի կիրակի օրերից, ժամը 12—4։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը մի հրաման է արձակել հասարակաց տները փակելու և բոլոր պոռնիկ կանանց արտաքսելու մասին, որ կարգադրել է Թիֆլիսի նահանգապետը։ Ոստիկանապետը իր հրամանի մէջ առաջարկում է ոստիկանական պաշտօնեաներին ուժեղացնել հսկողութիւնը քաղաքում՝ գաղտնի անառակութեան վրա։

◆ Սանիտարական և վիրաւորներ տեղափոխող մասի գերագոյն պետի կարգադրութեամբ վիրաւոր թիւրք գերիներին՝ առողջացնելու համար՝ պէտք է տեղաւորեն ոչ միայն զինուորական հիւանդանոցներում, այլ և քաղաքային և մասնաւոր։ Նրա կարգադրութեամբ գերի բժիշկները պէտք է բժշկեն գերի ընկած վիրաւոր թիւրքերին։ Բացի այդ կարգադրված է, որ հիւանդ և վիրաւոր գերի թիւրքերին բուրշի և կաշայի փոխարէն, որպիսի կերակուրները նրանցից շատերը չեն մարսում, տան փլաւ և ոչխարի միս։

◆ Ահա քանի օր է, ինչ Ալէքսանդրօ-Նէվսկի զինուորական տաճարի բակում ի ցոյց հասարակութեան դրված է ռուս-թիւրքական վերջին ընդհարումների միջոցին մեր զօրքերի թիւրքերից խլած պատերազմական աւարի մի փոքրիկ մասը՝ որպէս նմուշ։ Ցոյց են դրված 12 դաշտային և 22 լեռնային թնդանօթ, զանազան սիստեմի 24 հրացան՝ և ռմբակիր 47 սայլ։

◆ Թիֆլիսի շրջանի զօրքերի կոմենդանտ և պետ գեն. Ս. Վ. Վօլսկիի կարգադրութեամբ ակումբների բուֆետներում, ուր թոյլատրված էր սպիրտային խմիչքների վաճառքը, նախընթաց օրվանից, այսինքն յունվարի 13-ից թոյլատրված է վաճառել միայն գինի և գարեջուր։

◆ Որովհետև քաղ. վարչ. բիւջէտային-ֆինանսական յանձնաժողովի նախագահ Ա. Ր. Ֆիշէրը զբաղված է հիւանդանոցային գործերով, այն է՝ վիրաւորներ ընդունելով, այդ պատճառով վերստուգիչ յանձնաժողովի նախագահ Յ. Խունունցին առաջարկվել է նախագահել բիւջ.-ֆինանսական յանձնաժողովին քաղաքի 1915 թ. նախահաշիւը քննելու համար։

◆ Քաղաքային լոմբարդում սկսվել են գործառնութիւնները, որ կանգ էին առել ժամանակաւորապէս դեկտեմբերի վերջին։

◆ Կովկասի քաղաքների միութիւնը Ա. Բաբեանին՝ Սարիղամիշ է ուղարկել 500 ձեռք սպիտակեղէն վիրաւորների համար։

◆ Սարիղամիշի սննդական կէտի կառավարիչ բժ. Մարգարեանին ուղարկվեց 2 վագօն սպիտակ պաքսիմատ և 3 վագօն սպիտակեղէն, դաշտային խոհանոց, ախտահանութեան միջոցներ, փաթեթային իրեր և դեղօրայք։

◆ Քաղաքային վարկային ընկ. որոշել է յունվարի 25-ին ընկ. անդամների ժողով գումարել փախստականների օգտին որոշ գումար յատկացնելու համար։

◆ Մկրտիչ Աֆանասեանի կտակակատարներ Սիմէօն և Եղիսաբէթ Աֆանասեանները Նպաստամատոյց Ընկերութեանը նուիրեցին մի հարիւր րուբլի յօգուտ փախստականների։

◆ Մի քանի անձինք և հաստատութիւններ դիմում են Կովկասի ուսումնարանական շրջանի վարչութեան, հարցնելով թէ արդեօք կրճատվելու է 1914—15 ուսումնական տարին։ Այդ պատճառով հաղորդվում է, որ զբաղմունքները Կովկասի շրջանի բոլոր դպրոցներում ընթանալու են առանց կրճատման։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Յունվարի 1-ի վիճակախաղով 200,000 րուբլի ընկել է Սիմֆերօպօլի կալուածատէր Դաւիդովին։

◆ Մայրաքաղաքի համարեա բոլոր առաջադէմ օրաթերթերը, Պետական Դումայի և Խորհրդի ու նոյնիսկ զեկավար շրջանները ողջունում են կոմս Իգնատիէվին ժող. լուսաւորութեան մինիստրի պաշտօնին կոչելը։ Բոլորը միաբերան վկայում են և համոզված են, որ կոմս Իգնատիէվը, որ յայտնի է իր անցեալ լուսամիտ գործունէութեամբ, իր պատշաճ բարձրութեան վրա կը դնէ ժողովրդական լուսաւորութեան լուրջ գործը։

◆ Կուրսկի նահանգապետը նշանակվել է պետութեան մատակարարական մասի հսկիչ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Թիֆլիսի նահ. ազնուականութեան պատգամաւորական ժողովը վրաց դրամատիկական ընկերութեան այս սեզօնի համար յատկացրել է 5000 րուբլի։

◆ Պետ. Դումայի անդամ Ջխենկէլին հեռագրել է «Ախալի Ազրի» թերթին, որ «Ակակի Ծերեթելիի կարևոր թղթերը վտանգի մէջ են։ Անհրաժեշտ է պահպանել։ Ուղարկեցէք խառը յանձնաժողով Գրագիտութեան Ընկերութիւնից»։ Գրագիտութեան ընկ. հեռագրել է Քութայիսի իր ճիւղին ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծախկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկբ. հինգշ. և շաբթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—144

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 7
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի։
Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Ր. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ ճա-ահեր կաճ ատամներ և շատ վիրահատութիւններ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—6

Ծախվում են
1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ», նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րեցեպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպերով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, րեցեպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒԻ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ։ Թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը, Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տկճորի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։
Այս երեք գիրքը միասին պահանջողներին
ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ
երեք հետևեալ գրքերը. 1) «Պնկարմատի շալվարը» ծիծաղաշարժ վօդևիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միևնոյն դագաղում», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից, գեղեցիկ նկարներով, գինն է 7.։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. անպայման առաջուց ղրկել մարկաներով։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

ՀՄՈՒՏ
ԴՊԻՐ-ՏԻՐԱՑՈՒ որոնում պաշտօն
Դիմել՝ Թիֆլիս, Դվորցովայա փող. «Վիկտորիա» հիւրանոց, № 17.
24. 3—2

Լոյս տեսաւ
Պետրօգրադում Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ մի ն
ուսումնասիրութիւնը
Б. ИШХАНЯНЪ
«Нѣмецкій профессоръ о германском
шовинизмѣ»
(Факты и разоблаченія)
Գինն է 15 կոպէկ։
Դիմել կենտրոնական պահեստին՝ Петроградъ, Книжный магазинъ М. В. Попо Невскій № 66. իսկ Կովկասում՝ «Գուտենբերգ» (Թիֆլիս) և «Сотрудникъ» (Բաքու) գրավաճառներին։
2. 10—7

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Գոյութիւն ունի 1895 թ.
Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով։
Դասընթացքներում աւանդվում են. պարտադիր—Հաշւապահութիւն կրկնակի եռալ., պարզ, գերմ., ֆրանս., ամերիկ. և ուրիշ սիստեմ. արդիւնաբերութեան գան. ճիւղերի, նաև գործար. և նաւթարդիւն., առևտր. թւաբ., առևտր. թղթակց., քաղաքատնտ., առևտր. իրաւունք., մուրհակի կանոնադր., առևտր. թւաբ. համրիչի վրա և վայելչագր. (ամենավատ ձեռքի ուղղումն.). ոչ պարտադիր—Օտար լեզուներ, ստենոգրաֆիա և բեմինգտոն։
Նիւթերը մատեանների և գործնական պարապմունքների համար առնվում են բէլալ կեանքից, ինչպէս որ պաշտօնում գտնված դէպքում։
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։
Ատեստատներ տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։
Պարապմունքների սկիզբը ՅՈՒՆՎԱՐԻ 15-ԻՑ 1915 Թ.։
Խնդրագիրների ընդունելութիւնը դեկտեմբերի 15-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկ. 5—7-ը։
Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։
Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну. Николаевская, 22, Телефонъ 7—44. (Ն.Հ.Կ.) 1056.. 0—12

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ իրաւունքներով
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՋԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Խնդիրների ընդունելութիւն։ Պարապմունքները յունվարի 7-ից։
Լոյս է տեսել «Հաշւապահութիւն» գրքի նաև տեսական մասը։ Գինը 50 կ.։ I Տու-
1015. մանօվսկայա փող. № 13, սեփ. տ.։ 10—6

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Փարիզի Pigier գաղափարների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէլալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, եռալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Ստենոգրաֆիա. 3) Դակտիլոգրաֆիա (բեմինգտոն և այլ.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և ցատ-ցատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 11—12-ը և երեկ. 4—6-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը փիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա.օ.) 1046. 0—19

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50
Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հորիզոնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ույժին ½ ֆունտ կամ 200 գրամմ։
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պլատօյներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(Հ.Կ.) 551. 0—64

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.